



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2011 թվական N 426-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 27-Ի N 266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով «Զորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անդամ Անահիտ Լոբյանի դիմումը խորհրդի անդամի պարտականություններից ազատելու մասին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետի ու հաստատության կանոնադրության 52-րդ կետի պահանջները՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդների անվանական կազմը հաստատելու և առաջին նիստերը գումարելու մասին» N266 որոշմամբ հաստատված հավելվածի 78-րդ կետի՝ «Անահիտ Լոբյան» բառերը փոխարինել «Հեղինե Թումանյան» բառերով:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Կ. Հունանյանին՝ սույն որոշման մասին իրազեկել «Զորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՀԱՆԳԱԼԴՅԱՆ